ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/12, 24.01.2022թ.

Բողոք բերող անձ՝ «ԴԷԿՍ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» բաց մրցույթ

Գնման առարկան՝ բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել՝ չկայացած հայտարարել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի /Նաիրի/ բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթը,
2. Պարտավորեցնել՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի /Նաիրի/ բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1,
ՀՀ ֆինանսների նախարարություն

Բողոք բերող՝ «ԴԷԿՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Գետամեջ, 1փ. 6 փկղ. 4
Հեռ: (37494) 781811
Էլ.փոստ՝ deksllec@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3, 4-րդ հարկ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

- ***Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը***

✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

✓ Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն՝ կից ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:

✓ Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, **որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով armeps համակարգում փաստաթղթերը կցված չեն եղել:**

- ***Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ **համարժեք հատուցմամբ.**

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, **ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:**

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթ, որին սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն՝ կից ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, **որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:**

Սակայն արդեն Ընկերության համար անհասկանալի պայմաններում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով armeps համակարգում փաստաթղթերը կցված չեն եղել:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հայտ, որի հաջողությամբ բեռնվելու վերաբերյալ ստացվել է պատասխան և համակարգի միջոցով և էլ. Փոստի միջոցով:

Ցանկանում ենք նշել, որ Ընկերությունը այլևս չուներ որևէ հնարավորություն ստուգելու հայտի բեռնման հաջող ավարտի մասին, քան ստանալ համակարգի միջոցով հավաստումներ և արդյունքում համակարգի անհսկանալի աշխատանքի շնորհիվ Ընկերությունը զրկվել է իր համար այդքան կարևոր մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելու հնարավորությունից;

Ավելին, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանգիր ավելի բարձր գին առաջարկած մասնակցի հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել՝ չկայացած հայտարարել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթը:

Կամ

Պարտավորեցնել՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Հարգանքով՝

«ԴԷԿՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Ալիկ Հովհաննիսյան

21 . 01. 2022թ.